Կալիֆորնիայի Հանրային առողջապահության վարչություն
COVID-19 բուժումներ



Որո՞նք են COVID-19-ի բուժումները:

COVID-19-ի բուժումը դեղամիջոցներ են (դեղահատեր, ներարկումներ կամ IV), որոնք կարող են կանխել լուրջ ախտանիշները և հիվանդանոցային խնամքի անհրաժեշտությունը COVID-19-ի ախտանիշների սկսվելուց հետո:

Առողջապահական խնամքի մատակարարը կարող է ձեզ ասել, թե արդյոք դուք իրավասու եք բուժում ստանալու, և թե որ տեսակն է լավագույնը ձեզ համար:

Դուք կարող եք բուժում ստանալ, եթե դուք.

- **COVID-19-ի դրական թեստ ունեք** (թեստավորվեք ձեր բուժաշխատողի կողմից, Test to Treat վայրում, դեղատանը կամ օգտագործեք տնային թեստ), ԵՎ
- **Ավելի հավանական է, որ հիվանդանաք** (50 տարեկկանից բարձր եք, պատվաստված չեք կամ ունեք առողջական վիճակներ*):

Բուժումները հասանելի են ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների համար, ովքեր համապատասխանում են:

Որքան հնարավոր է շուտ

Արագ գործեք. Արդյունավետ լինելու համար բուժումը պետք է սկսվի առաջին ախտանիշների առաջացման օրվանից հետո:

Ինչպե՞ս կարող եմ բուժում ստանալ:

Տարբերակ Ա. Կապ հաստատեք ձեր առողջապահական խնամքի մատակարարի հետ:

- Եթե ունեք COVID-19-ի ախտանիշներ, ապա առողջապահական խնամքի մատակարարը կարող է օգնել ձեզ թեստավորվեկ և ստանալ բուժման դեղատոմս: Այնուհետև կարող եք գնալ դեղատուն՝ ձեր դեղորայքը ստանալու համար:
- **Եթե չունեք առողջապահական խնամքի մատակարար,** զանգահարեք 1-877-332-6585՝ պարզելու, թե ում հետ կարող եք խոսել ձեր ախտանիշների և բուժման մասին:

Տարբերակ Բ. Գնացեք Test to Treat վայր:

- Եթե ունեք COVID-19-ի ախտանիշներ, կարող եք թեստավորվել, դեղատոմս և դեղորայք ստանալ՝ բոլորը մեկ տեղում՝ Test to Treat վայրում:
- **Գտեք վայրն՝** օգտագործելով Test to Treat տեղորոշիչը: Դուք կարող եք նաև զանգահարել 1-800-232-0233 (TTY 1-888-720-7489) հեռախոսահամարով:

Սկանավորեք QR կոդն՝ այս թռուցիկի ինտերակտիվ հղումները տեսնելու համար:

CDPH California Department of PublicHealth

Ի՞նչ բուժումներ են մատչելի:

Կան բուժումների տարբեր տեսակներ: Առողջապահական խնամքի մատակարարը կամ «Test to Treat» վայրը ձեզ կասի, թե որ բուժումը կլինի ամենաանվտանգը և լավագույնը ձեզ համար: Բուժումները լինում են մի քանի ձևերով, ներառյալ դեղահաբերը, IV կամ ներարկումները:

Որքա՞ն արժեն բուժումները:

Ներկայումս միայն COVID-19 բուժումների մեծ մասի համար ծախսեր չկան, սակայն բուժհաստատությունները կարող են գանձել այցելության և հարակից ծառայությունների համար, ինչպիսին է COVID-19 թեստը: Medicare-ը, Medicaid-ը և որոշ մասնավոր ապահովագրական ծրագրեր ծածկում են բոլոր ծախսերն, այնպես որ պարզեք ձեր ապահովագրական պլանի հետ: Եթե ապահովագրություն չունեք, դիմեք բուժող հաստատությանը, թե արդյոք վճարներ կան:

Արդյո՞ք բուժումները փոխարինում են COVID-19 պատվաստանյութերին:

Ոչ, պատվաստանյութերը դեռևս մեր ամենաարդյունավետ միջոցն են՝ կանխելու լուրջ COVID-19 հիվանդությունը: Պատվաստանյութերը մարզում են ձեր իմունային համակարգը նախքան հիվանդանալը՝ պայքարելու ծանր հիվանդության դեմ, մինչդեռ բուժումներն օգնում են մարդկանց, ովքեր արդեն հիվանդ են, խուսափել ծանր հիվանդությունից:

Կա՞ն բուժումներ, որոնք ինձ թույլ չեն տալ COVID-19-ով վարակվել:

COVID-19-ի կանխարգելման լավագույն միջոցը պատվաստվելը և խթանիչ պատվաստումներ ստանալն է: Այնուամենայնիվ, եթե դուք թուլացած իմունային համակարգ ունեք կամ ծանր արձագանք եք ունեցել պատվաստանյութին, և չեք կարող լիովին պատվաստվել, դուք կարող եք իրավասու լինել Evusheld-ի համար, որը կարող է կանխել ծանր COVID-19 հիվանդությունը մինչև վարակվելը: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խոսեք առողջապահական խնամքի մատակարարի հետ:

Օգտակար տեղեկություններ.

- CDPH COVID-19 բուժումների կայք
- HHS Test to Treat տեղորոշիչ կամ զանգահարեք 1-800-232-0233
- HHS Test to Treat ծրագրի մասին տեղեկություններ
- *CDC Որոշակի առողջական վիճակներով անձինք